

ՓԱՄԱՆԱԿԸ

ՑՈՒՅՑ ԿՏԱ

(Ակիզորը՝ 1-ին էջում)

Երեկ ինձ մտա էր Հայաստանի հուշարձանների պահպանության հայկական բնկերության ներկայացուցիչը: Մա ինձ տվեց Լեոնային Ղարաբաղի տարածում գտնվող այն հուշարձանների ցուցակը (չուրջ 110), որոնք գտնվում են ծանր վիճակում: Գրանցից յուրաքանչյուրի վերականգնման համար կպահանջվի անվազն տասը հազարից մինչև մեկ միլիոն ոսկրի: Սակայն Հայաստանի հնարավորություններն այժմ, բնականաբար, սահմանափակ են: Բայց երևի թե հնարավոր լինի մի աշխատանք ուղարկել այստեղ, ստեղծել ուսանողական հնագիտական շոկատ, գոնե անցկացնել հուշարձանների անձնագրավորում, պարզել, թե ինչն ինչոց է, կազմել մտավոր նախահաշիվ և այլն: Կոմիտեն այժմ ի վիճակի չէ արժանի ուշադրություն և մեծ միջոցներ հատկացնել զրան, քանի որ նրա առջև կանգնած են շատ ու շատ առաջնահերթ, կենսական կարևոր խնդիրներ՝ կապված առողջապահության վիճակի բարելավման, մարզի կրթական, տնտեսական վերելքի հետ: Բայց և կոմիտեն անտարբեր չի մնա այդ հարցի նկատմամբ: Ուրեմն էլ զժվար լինի՝ միջոցներ կգտնվեն ժողովրդի պատմական հուշարձանների պահպանման համար:

ՀԱՐՑ. *Շնարավոր չէ՞ նրանի պետական համայնքների մասնաճյուղը բացել Ստեփանակերտում, որպեսզի ուսման նպատակով երիտասարդները չլքեն իրենց հարազատ վայրերը, ինչպես եղել է մինչև հիմա:*

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչ վերաբերում է Երևանի համալսարանի մասնաճյուղին, ապա մեր ծրագրերն այսպիսին են: Մենք դեմ ենք այն բանին, որ մարզում լինեն ինչ-որ մասնաճյուղեր: Դա այնքան էլ կյանքային չէ և երիտ էլ չէ: Մենք կուզենայինք, որ Ստեփանակերտը ապագայում ունենա իր ինֆուրույն ինստիտուտը, բայց ոչ մանկավարժական, որը բողոքել է հարկ եղածից տասնապատիկ ավել մանկավարժներ, այլ, ասեմք, ժողովրդական տնտեսության կամ պոլիտեխնիկական ինստիտուտ, որը կադրեր պատրաստի ժողովրդական տնտեսության, սոցիալական ոլորտի համար: Կարծում եմ, այդ ուղղությամբ պիտի աշխատել:

ՀԱՐՑ. *Ղարաբաղը Հայաստանի հետ երկաթուղային կապ կունենե՞ն:*

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ հնարավորությունը չի կարելի բացառել, սակայն դա երկարաժամկետ խնդիր է: Իսկ առաջնահերթ խնդիրն է վերանորոգել Ստեփանակերտ-Լաչին-Գորիս հանապարհը: Այդ պարտավորությունն իր վրա է վերցրել Հայաստանի Մինիստրների խորհուրդը, հուսով եմ, որ դա կկատարվի: Մենք այդ հանապարհի հետ մեծ հույսեր ենք կապում, որովհետև դա թե՛ փոստային կայուն կապ կլինի Երևանի հետ և թե՛ լավ ավտոբուսային հաղորդակցության:

ՀԱՐՑ. *Մարզի հանրապետական նշանակության ձեռնարկությունները որտեղից են ստանալու պետական վերջերս:*

ՊԱՏԱՍԽԱՆ. Մեր պլանները մտավորապես այսպիսին են. նախ պիտի անցնենք ինֆուրույն, համընդհանուր տնտեսաշարժի ֆազականությանը, որպեսզի նվազագույնի հասցնենք պետական վերջերս: Միուրեակա, հանրապետական և տեղական պետական վերջերս այսօրվա դրությամբ մեզ մտա կազմում են 12 տոկոս: Բայց այդ վիճակը, ինչու քաղցնել, մի շարք ձեռնարկությունների ղեկավարների բառացիորեն զցել է ցնցակարվածի մեջ: Թուրքն այնքան են տարվել ֆազականությանը, որ ամենևին չեն մտածել,

թե ոնց են աշխատելու հաջորդ տարում, ովքեր են լինելու իրենց պատվիրատուները, մատակարարները, որտեղից են ֆոնդեր ստանալու: Ինֆուրույնությունն ու պատասխանատվությունը նրանց անակնկալի է բերել: Շատ ձեռնարկություններ այսօր, քստ էություն, կանգնած են պարապուրդի եզրին՝ հենց համապատասխան հումքով շապահովված լինելու պատճառով:

Մենք խնդիր ենք դրել, որ մեր բոլոր մատակարարումները կատարվեն կենտրոնից: Դա Մինիստրների խորհրդի որոշմամբ էլ նախատեսված է: Իսկ ի՞նչն է խանգարում անհապաղ տնտեսաշարժի անցնելուն՝ մարզի պատրաստվածության մակարդակը: Մեր վաճառահանողներն այսօրվա դրությամբ ի վիճակի չեն իրենց վրա վերցնելու բոլոր հարցերը: Պատրաստ չեն, որովհետև որակավորում չկա, չկան պահեստներ ու կայուն կապեր: Ստիպված ենք ընթացում սովորել:

Այս հարցում խելամուտություն է պետք հանդես բերել, կարիք չկա տնտեսական կյանքի մեջ գաղափարական անհարկի մոտիվներ մտցնել: Այն ֆոնդերը, որ Ադրբեյջանը ստացել է Լեոնային Ղարաբաղի համար՝ Ղարաբաղը պետք է ստանա Ադրբեյջանից: Այն, ինչ կնաչողվի Միության հետ ուղղակի կապերի միջոցով անել՝ կստանա Միությունից: Ինչով կարող է օգնել Հայաստանը՝ Հայաստանից:

Մենք, քստ էություն, նախատեսում ենք օգտագործել մարզային մի շարք տնտեսաշարժային միավորումների խումբ՝ տրանսպորտի, կապի, տեղական արդյունաբերության, շինարարության և այլն, որոնք կունենան միուրենական կապեր կամ կլինեն բացարձակապես ինֆուրույն, տնտեսաշարժային և հարկատու կլինեն տեղական բյուջեին: Բնական է, որ մարզի նորմալ գոյությունը ունենա է առանց Ադրբեյջանի հետ խելամուտ, պատմականորեն ձևավորված կապերի: Դրանց խզումը թե՛ տնտեսապես և թե՛ ֆազական առումով անխոհեմություն կլինի: Սկզբունքն այստեղ նույնն է՝ հավասարակշիռ փոխանակության մեջ հավասար շահագրգռություն ունեցող կողմերի փոխադարձ հարգանք:

Իսկ ինչ վերաբերում է հանրապետության հետ ադրբեյջանական բնակչության կապերին, կրթական, մշակութային և այլ առընչություններին, ապա նա շարժի զգա շնչին իսկ սահմանափակում: Այս հարցում մենք բոլորս պարտավոր ենք ներանկատություն, ազգային յուրահատկությունների բնրանում դրսևորել: Ուրիշ այլ մտնեցումը կտանի ազգամիջյան բշեամանքի վերածնման: Մենք այդ նախապարհով չենք գնա:

ՀԱՐՑ. *Սոցիալ-տնտեսական ծրագրի իրագործմանը լուրջ խոչընդոտ հանդիսացավ Լաչինի և Ղազախի պետավտոնոմապարհների ապօրինի փակումը: Լուծված է այդ նախապարհների բացման հարցը, եթե այո, ապա անվտանգությունն ի՞նչ նրաշխիքներ կան:*

ՊԱՏԱՍԽԱՆ. Ճանապարհները բաց են, էղած զինվորական պահակակետերը վերահսկում են՝ ապահովելով անվտանգությունը: Զինվորական պարետը ամեն օր զեկուցում է մեզ, որ մինչև հիմա շարունակվում է զենքի, երբեմն՝ մեծ ֆանակությամբ, բռնագրավումը: Զինվորական պահակակետեր հետագայում էլ կլինեն այդ նախապարհների վրա: Բայց բնակչության տեղաշարժը չի սահմանափակվում:

Մենք շատ ինտենսիվ կերպով աշխատում ենք, որպեսզի մեր օղակավակայանում կառուցվի օրեփան, կարգավորվի օղակավակայանի անխափան կապը: Դա էլ է Հայաստանի հետ կապերի ամրապնդման խնդիրներից մեկը:

ԲՆԱԿԱՆ. «Գրական թերթի» ընթերցողների անունից շնորհակալություն եմ հայտնում Ձեզ հարցազրույցի համար: